ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
21.08.2019թ. կնքված N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա-2
ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի

Ք. Երևան <<30>> դեկտեմբերի 2019թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գազկոմշին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 21.08.2019թ. կնքված N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա-2 ծածկագրով գնման պայամանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքները շարունակել իրականացնել համաձայն նախագծային փաստաթղթերի՝ ձմեռային դադարից հետո, այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

1.2 Պայմանագրի N 3 Հավելվածի <<80 000 000>> թիվը փոխարինել <<28 767 049>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի գործողությունը տարածվում է կողմերի՝ մինչև համաձայնագրի կնքումը փաստացի ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	<<Գազկոմշին>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ք. Երևան, Նոր-Նորքի 9-րդ գ-ծ 20/53
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	հեռ.՝ 095000027
Հ/Հ 900011028314	Էլ.փոստ gascomshin@gmail.com
ՀՎՀՀ 02555816	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող	Հ/Հ 11500905218000
	ՀՎՀՀ 00843968
	Տնօրեն
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	Մ. ՄԻՍԱԿՅԱՆԻ
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ. Տ.	Կ.Տ